ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<07>> Մայիսի 2021թ. ՆՄՈ/140-2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ՆՄՈ/160-2019 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 15-ի N25-Ն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով նոր խմբագրությամբ շարադրված հավելվածի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 27-ի N 01/09.3/8366-2021 գրությունը և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արմավիրի մարզի մշտական բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝

1) առանձին կոլեգիալ կառավարման մարմինների (խորհուրդների) անվանական կազմերը՝ համաձայն NN 1- 40 հավելվածների.

2) միացյալ կոլեգիալ կառավարման մարմինների (խորհուրդների) անվանական կազմերը՝ համաձայն NN 41-75 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առեվտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին>> ՆՄՈ/160-2019 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

07.05.2021

VERIFIED OCSP 07.05.2021 17:55:58 GMT+4

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230